



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/138/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

21 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի 2025 թվականի մայիսի 21-ին քննելով ՀՀ Երևան քաղաքի ավագանու անդամ՝ Լուսինե Սարգսյանի ընտանիքի անդամ Վահե Հայրապետյանի կողմից պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/138/2025 վարչական գործը.

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով infocom.am կայքի 2024 թվականի սեպտեմբերի 16-ի «Անհամապատասխանություններ Երևանի ավագանու մի շարք անդամների հայտարարագրերում» (<https://infocom.am/hy/Article/137637>) վերտառությամբ հրապարակմամբ հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքները, իրականացրել է Երևան քաղաքի ավագանու անդամ Լուսինե Սարգսյանի ընտանիքի անդամ՝ Վահե Հայրապետյանի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերում հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

Վահե Հայրապետյանի՝ 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրում հայտարարագրված է «Վ.Վ. ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ից ստացված եկամուտ՝ 25,000,000 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրում «Վ.Վ. ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ից որպես ստացված եկամուտ հայտարարագրված է 1,920,000 ՀՀ դրամ:

Վերոնշյալ վերաբերյալ Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հունվարի 21-ին 01/245-2025 գրությամբ Վահե Հայրապետյանին ուղարկված՝ պարզաբանում հայցելու վերաբերյալ գրությանն ի պատասխան՝ 2025 թվականին ապրիլի 8-ին (Մ-2015-2025 գրությամբ) Հանձնաժողով է մուտքագրվել Վահե Հայրապետյանի պարզաբանումը, համաձայն որի՝ Վահե Հայրապետյանի՝ 2023 թվականի՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրում, որպես եկամուտ, հայտարարագրված է «Վ.Վ. ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ից

կանխատեսվող շահաբաժինը՝ 25,000,000 ՀՀ դրամի չափով, իսկ 2023 թվականի՝ տարեկան հայտարարագրում որպես եկամուտ հայտարարագրված է միայն աշխատավարձը՝ 1,920,000 ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, պարզաբանմամբ հավելվել է, որ 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացման պահին «Վ.Վ. ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի տարվա շահույթն ամփոփված չի եղել, 25,000,000 ՀՀ դրամը 2023 թվականի կանխատեսվող շահաբաժինն է եղել, ինչի ճշգրտված ցուցանիշը տարեվերջին կազմել է 6,925,318 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով 2023 թվականի 4-րդ եռամսյակում ընկերության կատարած կապիտալ ներդրումներն ու ընթացիկ ծախսերը:

Ներկայացված պարզաբանման համաձայն Վահե Հայրապետյանի՝ 2023 թվականի՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրում որպես եկամուտ հայտարարագրվել է կանխատեսվող, սակայն չստացված եկամուտը, իսկ 2023 թվականի տարեկան հայտարարագրում «Վ.Վ. ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ից որպես ստացված շահաբաժին հայտարարագրման ենթակա է եղել 6,925,318 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ, հաշվի առնելով Վահե Հայրապետյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրված գույքի (մասնավորապես՝ դրամական միջոցների) ավելացումը՝ մինչ Վահե Հայրապետյանից պարզաբանում հայցելը, Լուսինե Սարգսյանի և Վահե Հայրապետյանի՝ 2023 թվականի տարեկան հայտարարագրերում հայտարարագրված տվյալների հիման վրա հաշվարկվել են ընթացիկ տարեկան ծախսերը 2023 թվականի համար: Ընթացիկ տարեկան ծախսերը հաշվարկվել են հետևյալ սկզբունքով՝ դրամական միջոցների տարեսկզբի մնացորդ (+) եկամուտներ (-) դրամական միջոցների տարեվերջի մնացորդ: Արտարժույթով արտահայտված գույքի արժեքը ՀՀ դրամով ներկայացվել է՝ հիմք

ընդունելով համապատասխան տարվա միջին տարեկան փոխարժեքը: Հաշվարկը ցույց է տվել, որ Լուսինե Սարգսյանի և Վահե Հայրապետյանի ընթացիկ տարեկան ծախսերը ճշգրտման արդյունքում կազմել են 15,816,213 ՀՀ դրամ: Հաշվարկում ներառվել է Վահե Հայրապետյանի՝ 2023 թվականի՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրում հայտարարագրված՝ «Վ.Վ. ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ից 25,000,000 ՀՀ դրամի չափով ստացված եկամտի վերաբերյալ տվյալը: Հաշվի առնելով Վահե Հայրապետյանի կողմից ներկայացված պարզաբանումը՝ վերոգրյալ ճշգրտումն իրականացվել է 25,000,000 ՀՀ դրամի փոխարեն պարզաբանմամբ նշված՝ 6,925,318 ՀՀ դրամի չափով, ինչի արդյունքում Լուսինե Սարգսյանի և Վահե Հայրապետյանի ընթացիկ տարեկան ծախսերը կազմել են -2,258,469 ՀՀ դրամ, ինչը նշանակում է, որ Լուսինե Սարգսյանի և Վահե Հայրապետյանի գույքի (մասնավորապես՝ դրամական միջոցների) ավելացումն առերևույթ չի հիմնավորվում հայտարարագրված եկամուտներով կամ առերևույթ առկա են սխալ կամ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալներ:

1.2 Հանձնաժողովը ձեռքբերված և ուսումնասիրված վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 22-ին Վահե Հայրապետյանին հասցեագրել է թիվ 01/1642-2025 գրությունը՝ հրավիրելով Հանձնաժողով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելու:

1.3 Արձանագրություն կազմելու հրավերի վերաբերյալ ծանուցագրին ի պատասխան 26/04/2025 թվականին Վահե Հայրապետյանից Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեի (info@cpcarmenia.am) միջոցով

ստացվել է հաղորդագրություն, համաձայն որի՝ Վահե Հայրապետյանը չի կարող ներկայանալ ՎԻՎ արձանագրության կազմմանը և գործի քննությանը: Վահե Հայրապետյանը տեղեկացրել է, որ տարվա ընթացքում այլ եկամուտներ չեն ստացվել և կցել է ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկը՝ 2023 թվականի հաշվետու ժամանակահատվածի վերաբերյալ:

1.4 2025 թվականի ապրիլի 30-ին պատշաճ ծանուցված Վահե Հայրապետյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 69/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Վահե Հայրապետյանի ներկայացուցիչ Լուսինե Սարգսյանի մասնակցությամբ 2025 թվականի մայիսի 16-ին՝ ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

1.6 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ վարույթի մասնակցի ներկայացուցիչ՝ Լուսինե Սարգսյանի կողմից ներկայացվել է միջնորդություն գործի քննություն հետաձգելու վերաբերյալ՝ վարույթի մասնակցի համար բարենպաստ փաստերի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու նպատակով:

1.7 Վարույթի մասնակցի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգվել և նշանակվել է 2025 թվականի մայիսի 21-ին՝ ժամը՝ 15:00-ին: Գործի քննության հետաձգման, նշանակված օրվա և ժամի վերաբերյալ ծանուցումն ուղարկվել է Վահե Հայրապետյանի էլեկտրոնային փոստի հասցեին, որի վերաբերյալ ծանուցման հավաստումը, ինչպես նաև 2023 թվականի ընթացքում ստացված եկամուտների

վերաբերյալ ապացույցները վարույթի մասնակիցն ուղարկել է Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.8 2025 թվականի մայիսի 21-ին՝ ժամը՝ 15:00-ին պատշաճ ծանուցված Վահե Հայրապետյանի բացակայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Վարչական վարույթի ընթացքում Վահե Հայրապետյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն 2023 թվականի՝ պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրում, որպես եկամուտ, հայտարարագրված է «Վ.Վ. ԵՂԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ից կանխատեսվող շահաբաժինը՝ 25,000,000 ՀՀ դրամի չափով, իսկ 2023 թվականի՝ տարեկան հայտարարագրում որպես եկամուտ հայտարարագրված է միայն աշխատավարձը՝ 1,920,000 ՀՀ դրամի չափով: Միաժամանակ, պարզաբանմամբ հավելվել է, որ 2023 թվականի պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացման պահին «Վ.Վ. ԵՂԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի տարվա շահույթն ամփոփված չի եղել, 25,000,000 ՀՀ դրամը 2023 թվականի կանխատեսվող շահաբաժինն է եղել, ինչի ճշգրտված ցուցանիշը տարեվերջին կազմել է 6,925,318 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով 2023 թվականի 4-րդ եռամսյակում ընկերության կատարած կապիտալ ներդրումներն ու ընթացիկ ծախսերը:

Վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողով է ներկայացվել նաև իր և կնոջ՝ Լուսինե Սարգսյանի՝ 2023 թվականի ընթացքում ստացված եկամուտների ճշգրտված հաշվարկները և դրանք հիմնավորող բանկային հաշվի քաղվածքները:

Նշված հաշվարկների համաձայն Լուսինե Սարգսյանի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ տվյալները՝

Դրամական միջոցների մնացորդ 01.01.2023 թվական – 950,000 ՀՀ դրամ,

Եկամուտ աշխատավարձի տեսքով - 3,701,213 ՀՀ դրամ,

2023 թվականի ընթացքում ներգրավված վարկային միջոցներ – 4,712,002 ՀՀ դրամ,

Դրամական միջոցների մնացորդ 31.12.2023 թվական – 1,436,000 ՀՀ դրամ:

Վահե Հայրապետյանի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ տվյալները՝

Դրամական միջոցների մնացորդ 01.01.2023 թվական – 12,331,000 ՀՀ դրամ,

Եկամուտ աշխատավարձի տեսքով – 1,920,000 ՀՀ դրամ,

2023 թվականի ստացված շահաբաժին – 7,000,000 ՀՀ դրամ,

2023 թվականի ընթացքում ներգրավված փոխառու միջոցներ – 3,000,000 ՀՀ դրամ,

Դրամական միջոցների մնացորդ 31.12.2023 թվական – 11,650,000 ՀՀ դրամ:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/138/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում հետևյալը՝

3.1 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ շտեմարանի տվյալների, ինչպես նաև Հայտարարագրում հայտարարագրված տվյալների համաձայն Վահե Հայրապետյանը հանդիսանում է Լուսինե Սարգսյանի ամուսինը:

3.2 Լուսինե Սարգսյանը 2023թ. սեպտեմբերի 17-ին կայացած ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համամասնական ցուցակով

ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ (<https://www.yerevan.am/hy/alderman-staff/>):

3.3 Վահե Հայրապետյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.4 Վահե Հայրապետյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ կանխիկ դրամական միջոցները 2023 թվականի տարեսկիզբ կազմել են 12,331,000 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին 11,650,000 ՀՀ դրամ: Մինչդեռ Հայտարարագրում հայտարարագրված տվյալների համաձայն՝ 2023 թվականի տարեսկզբին կազմել են 11,567,000 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 25,674,000 ՀՀ դրամ:

3.5 Վահե Հայրապետյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ «Վ.Վ. ԵՂԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ից 2023 թվականի ընթացքում ստացված շահաբաժինը կազմել է 6,925,318 ՀՀ դրամ, որը չի հայտարարագրվել որպես 2023 թվականի ընթացքում ստացված եկամուտ:

3.6 Վահե Հայրապետյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ստացել է 3,000,000 փոխառություն, որի վերաբերյալ տվյալները չեն հայտարարագրվել:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) Երևան համայնքի ավագանու անդամների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական

պարտականություններն ստանձնելու հայտարարագրում ներկայացնում են իրենց գույքի և եկամուտների, իսկ դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում՝ գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները:

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է սույն հոդվածով սահմանված եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:(...) Սույն օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված հետևյալ եկամուտները՝ ստացված փոխառությունները, ստացված վարկերը (այդ թվում՝ հիպոտեկային), տրված փոխառությունների կամ բանկային ավանդների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը, շահաբաժինները (...):

4.4 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին,

հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Վահե Հայրապետյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալները Հայտարարագրում չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Հայտարարատու անձի կողմից Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալների հայտարարագրման օրենսդրական նպատակը կայանում է հայտարարատու անձի գործունեության թափանցիկությունը, հանրային հաշվետվողականությունը և վերահսկողությունը, ինչպես նաև վերջինիս գույքային դրության բացահայտումը:

Սույն գործով գործի քննության ընթացքում հաստատված փաստերի համաձայն՝ ՀՀ Երևան քաղաքի ավագանու անդամ Լուսինե Սարգսյանի ընտանիքի անդամ Վահե Հայրապետյանը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի մայիսի 22-ին ներկայացված Հայտարարագրում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական և սխալ տվյալներ, այն է.

Հայտարարագրի «Բ.6.5. Կանխիկ դրամ» բաժնում 2023 թվականի տարեսկիզբ Վահե Հայրապետյանը հայտարարգրել է 11,567,000 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝

25,674,000 ՀՀ դրամն, մինչդեռ պետք է հայտարարագրեր 2023 թվականի տարեսկիզբ 12,331,000 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին 11,650,000 ՀՀ դրամ:

Բացի այդ, ըստ Վահե Հայրապետյանի կողմից ներկայացված պարզաբանման նա 2023 թվականի ընթացքում ստացել է 6,925,318 ՀՀ դրամ շահաբաժին, ինչպես նաև ներգրավել է 3,000,000 ՀՀ դրամի չափով փոխառու միջոցներ, որոնք, սակայն, չի հայտարարագրել Հայտարարագրի «Հաշվետու տարվա եկամուտներ» բաժնում , մինչդեռ պարտավոր էր հայտարարագրել՝ Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերի համաձայն:

Տվյալ պարագայում Հանձնաժողովն արձանագրում է, որ Հայտարարագրում առկա կանխիկ դրամական միջոցների վերաբերյալ անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ հայտարարագրելու հետևանքով հնարավոր չի եղել ամբողջական պատկերացում կազմել Վահե Հայրապետյանի գույքային դրության մասին, որի արդյուքում վտանգվել է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարակական շահը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Վահե Հայրապետյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել

ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ամփոփելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վահե Գագիկի Հայրապետյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահե Գագիկի Հայրապետյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Վահե Գագիկի Հայրապետյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ